Ռ. Ա. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ. Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը (պատմաազգագրական ուսումնասիրություն), *Երևան, հեղինակային հրատ., 2007, 304 էջ:*

Սա հեղինակի երկրորդ մենագրությունն է, որ նվիրված է արևմտահայերի, մասնավորապես պատմական Աղձնիք նահանգի հայ բնակչության էթնոմշակութային բնութագրությանը: Առաջին գիրքը[1] *նվիրված էր աղձնիքահայերի ընտանիքի և ընտանեկան ծիսակարգի քննությանը: Գրախոսվող աշխատությունը վերաբերում է ազգագրական գիտության կարևոր հիմնախնդիրներից մեկի՝ ցարդ ամբողջականորեն չուսումնասիրված ամուսնահարսանեկան ծիսաշարի՝ հասարակական կյանքի անկյունաքարային այնպիսի մի երևույթի ուսումնասիրությանը, որը հասարակության ոչ միայն ֆիզիկական, այլ նաև մշակութային վերարտադրության հիմքն է կազմում: Աշխատության կարևորությունը կրկնապատկվում է նաև այն առումով, որ եղեռնից մազապուրծ աղձնիքահայերից ու նրանց սերունդներից մի քանի տասնամյակի ընթացքում գրառված նյութն այսօր արդեն հնարավոր չէր լինի գրանցել. փաստորեն, այս աշխատության միջոցով ազգագրական կարևոր նյութը ոչ միայն փրկվում է կորստից, այլ նաև վերլուծված ու համակարգված ներկայացվում հանրությանը: Նյութերի գերակշիռ մասն առաջին անգամ է դրված գիտական շրջանառության մեջ:*

Գրքում մանրազնին ներկայացվում են նախահարսանեկան, բուն հարսանեկան ու հետհարսանեկան արարողակարգերը, դրանց առնչվող հավատալիքները, բացահայտվում դրանց բնույթն ու պատմական ակունքները, առանձնացվում համահայկականն ու տեղական յուրահատկությունների ողջ տարապատկերը: Հավելվածի ձևով ներկայացված է նաև ամուսնահարսանեկան ծեսերի տարբեր փուլերն ուղեկցող հարսի ու փեսայի գովքերը, հարսի հրաժեշտի, ընդունելության, շնորհավորական, օրհնանքի երգերը, պարերգեր, կատակերգեր:

Աշխատությունը բաղկացած է 3 գլխից. առաջին գլուխը («Նախահարսանեկան սովորույթներ և ծեսեր») նվիրված է նախահարսանեկան շարքին, հատկապես՝ ընտրության և նշանադրության սովորույթներին ու ծեսերին: Ամուսնությունը արևմտահայոց մեջ կատարվել է սովորութային իրավունքի բազմադարյան ուղի անցած և օրենքի ուժ ստացած որոշակի նորմերով: Այս հարցերը քննության առնելիս ներկայացվել են նաև խնդրի շուրջ ազգագրական գիտության մեջ առավել ընդունելություն գտած տեսակետները: Մասնավորապես խոսքը վերաբերում է առևանգմամբ, գնմամբ և պատգամախոսությամբ իրականացված ամուսնության ձևերին: Ինչպես միջին դարերում, XIX դ. վերջերին և XXդ. սկզբներին ևս հայերի մեջ ամուսնությունը հիմնականում կատարվել է պատգամախոսությամբ, որտեղ ծնողների կամքը վճռական է եղել: Ամուսնացող զույգը հիմնականում զրկված էր միմյանց տեսնելու, անձամբ ճանաչելու ու ընտրելու հնարավորությունից: Ամուսնական զույգ ընտրելիս պարտադիր նկատի են առնվել սոցիալ-տարածքային, էթնիկական, կրոնական, բարոյական մի շարք հանգամանքներ, որոնցում քիչ չեն նաև հնագույն շրջանի համայնական կյանքի և ամուսնական հարաբերությունների ավանդույթներին առնչվող փոխակերպումները:

Արժեքավոր է նաև առաջին գլխում ներկայացված խնամախոսության (աղջիկ-տես, ուզնական, խոսքկապ) *և նշանադրութ-*

[1] *Ռ. Ն ա հ ա պ ե տ յ ա ն. Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ), Երևան, 2004, 258 էջ:*

յան սովորույթների ու ծեսերի նկարագրությունը, ինչը հավաքված ազգագրական նյութերի շրջանակում հեղինակը փորձել է կատարել հնարավորինս ամբողջական տեսքով: Նախահարսանեկան շարքը, նշված փուլային արարողություններով, ներառում էր նաև նախորդ դարաշրջանների հասարակական կենցաղի նկարագրին բնորոշ այնպիսի տարրեր, որոնք վերաբերում էին ամուսնացողների միջև գոյություն ունեցող սահմանափակումների և արգելքների խստիվ կիրառմանը: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում ամուսնությունն օրինականացնող ծիսակատարությունների և սովորույթների, ինչպես նաև հարսանիքին նախորդող շրջանում հարսնացուին ու նրա ծնողներին տրվող նվիրաբերությունների նկարագիրը, որում հեղինակն առնչություններ է տեսնում հնագույն շրջանի ամուսնական որոշ ավանդույթների հետ:

Խնամախոսության կարգը, ինչպես պատմաազգագրական բոլոր մարզերում, Աղձնիքում ևս ուղեկցվում էր թատերականացված երկխոսություններով, որոնցում, առավել քան ծիսական այլ արարողություններում, աղջկա և տղայի ծնողները խոսում էին աղջկա արժանիքների, ամուսնական ծեսին կողմերի մասնակցության, փոխադարձ պարտավորությունների մասին, գալիս համաձայնության նաև ամուսնությանն ուղեկցող նյութական արժեքների փոխանակության խնդիրների շուրջ: Աղձնիքահայերի ամուսնական սովորույթներում ուրույն տեղ ուներ օժիտի հարցը: Դրա շուրջ պայմանավորվածությունը ձեռք էր բերվում կողմերի նյութական պարտականություններին վերաբերող հարցերի քննարկման ընթացքում: Այդ պայմանավորվածությունը կայացնելու գործողությունն այստեղ հայտնի էր որպես խալանկտուր, *որ բառացի նշանակում է «գլխագնի որոշում»: Հեղինակի վկայմամբ բանահավաքները և նույնիսկ որոշ ազգագրագետներ այդ տերմինը բառացի են ընկալել, մինչդեռ* խալանկտուր *ասելով հասկացվել է աղջկա օժիտի համար տղայի հոր կողմից վճարվելիք գումարը: Հեղինակը հակված է մերժելու գլխագնի առկայությունը հայերի միջավայրում՝ բացառությամբ քրդախառն բնակեցված որոշ շրջանների:*

Երկրորդ գլխում («Հարսանեկան սովորույթներ ու ծեսեր»), նյութի ընձեռած հնարավորության սահմաններում, ներկայացվում է աղձնիքահայոց հարսանիքը: Հարսանեկան հանդեսը, որ ուղեկցում էր ամուսնական արարողությանը, նրա սրբագործումն ու հասարակական ճանաչումն էր, այս պատճառով այն արվում էր շքեղ ու ճոխ՝ անկախ տվյալ ընտանիքի նյութական դրությունից ու հնարավորությունից, համայնքի լայն աջակցությամբ ու մասնակցությամբ, տեղական սովորույթներին համապատասխան: Հարսանիքը ներկայացված է չորս գլխավոր հանգրվաններով՝ հարսնառ, հարսանեկան տոնահանդես, պսակադրություն և առագաստ*:*

XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայոց ավանդական հարսանիքում պահպանվել էին մի շարք ծեսեր ու սովորույթներ, որոնցում նկատելի են վաղնջական ժամանակների բազմաթիվ մնացուկներ: Դրանցից է գյուղական համայնքի ակտիվ մասնակցությունը հարսանեկան հանդեսի բոլոր փուլերին՝ խստիվ պահպանելով հնուց եկող սեռատարիքային սահմանափակումները: Հարսանեկան ամբողջ շարքն ուղեկցվում էր խորհրդանշական, չարախափան, հմայական ծեսերով ու արարողություններով, որոնք անմիջական աղերսներ ունեն նախաքրիստոնեական հավատալիքների հետ: Մանրամասնորեն ներկայացված են ամուսնական զույգին հետևող փեսաեղբայրների, հարսնաքույրերի և առանձնապես քավորի դերակատարումները: Հեղինակը, հենվելով իր կատարած ուսումնասիրությունների վրա, եզրակացնում է, որ քավորի ծագումնաբանական ակունքները հասնում են մինչև հնագույն ժամանակներ: Հարսանեկան ծիսակատարությունների ողջ ընթացքում քավորին վերապահված էր բացառիկ դեր՝ պաշտպանել փեսային ու հարսին անտեսանելի և տեսանելի չարիքներից, վտանգներից ու թշնամիներից: Նրա պաշտոնը կարևոր էր ոչ միայն հարսանեկան արարողությունների ժամանակ, այլև ամուսինների հետագա

կյանքում, նրանց երեխաների կնունքի և այլ հարցերում:

Երրորդ գլուխը («Հետհարսանեկան սովորույթներ և ծեսեր») նվիրված է հետհարսանեկան սովորույթներին ու ծեսերին: Ներկայացվում է նորահարսի դերին և կարգավիճակին առնչվող բազմաթիվ հարցեր, ընտանեկան սահմանափակումների, խուսափումների, չխոսկանության, հնազանդության այն համակարգը, որը եղել է հայոց ավանդական ընտանեկան կենցաղի առանցքային տարրերից մեկը: Փորձ է արվել համակարգված ձևով ներկայացնել նաև խուսափման ավանդույթն ու սահմանափակումները ամուսինների, նրանց հարազատների, հյուրերի նկատմամբ և այլն: Խուսափման սովորույթը հիմնականում դրսևորվել է վարքագծային սահմանափակումներով և չխոսկանությամբ:

Աշխատության համապատասխան գլուխներում զուգահեռաբար ներկայացվում է աղձնիքահայերի ներկա սերնդի ամուսնահարսանեկան արարողությունների բնույթը՝ համեմատած XIX դարավերջի ու XX դարասկզբի նույնատեսակ արարողությունների հետ: Վեր են հանվում այն փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել հարսանեկան արարողությունների մասնակիցների, հարսի ու փեսայի, նրանց ծնողների, քավորի գործառույթներում: Ավելացնենք, որ Աղձնիքի ամուսնահարսանեկան սովորույթների ողջ ծիսակարգը պատմական Հայաստանի համանման ծիսակարգի մի տարբերակն է: Այն ավելի լավ էր պահպանված հատկապես լեռնային Սասունում՝ մեկուսացածության շնորհիվ:

Հեղինակը եզրակացնում է, որ դարերի ընթացքում սոցիալ-տնտեսական, հասարակական, մշակութային և այլ զարգացումների հետևանքով հնագույն շրջանից եկող բազմաթիվ ծեսեր ու սովորույթներ փոխակերպումների են ենթարկվել, որոշներն էլ մերժվել կամ մոռացության են մատնվել: Դրանք հիմնականում կրոնահմայական բնույթի ծեսերն են: Պահպանվել են այն արարողությունները, որոնք, ուրախառիթ լինելով, զարդարում ու ավելի են շքեղացնում հարսանիքը: Նշյալ փոփոխությունները կրում են հասարակական նոր հարաբերությունների ու կենցաղի կնիքը: Դա հստակ երևում է աղձնիքահայերի ժամանակակից հարսանեկան ծիսակարգի բազմաթիվ դրվագներում:

Ներկայացվող մենագրությունը, այդպիսով, գիտական արժեքավոր հետազոտություն է՝ նվիրված հայ ազգագրության կարևոր հիմնախնդիրներից մեկին՝ ամուսնահարսանեկան սովորույթներին ու ծեսերին. այն զգալի ներդրում է հիմնախնդրի ամբողջական ուսումնասիրման ուղղությամբ: Ավելի քան երեք տասնամյակ հեղինակի հավաքած դաշտային ազգագրական նյութի հիման վրա ստեղծված սույն աշխատությունը մեծապես օգտակար կլինի ազգագրագետների, ուսանողների, ինչպես նաև հայ ժողովրդական մշակույթով հետաքրքրվողների համար:

ԱՂԱՍԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ